ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 61/3707 «28» 11 2014թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով
գնման ընթացակարգով շրջանակային
համաձայնագրեր կնքած մասնակիցներին

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնման ընթացակարգի շրջանակներում Երևանի քաղաքապետարանի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրի համաձայն, կից ներկայացվող պայմանագրի նախագիծի N1 հավելվածում նշված ապրանքները:

Տեղեկացնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել **ք. Երևան, Արգիշտիի 1 հասցեով, N 321 սենյակ, Գ. Հուրոյանին, մինչև 2014թ. դեկտեմբերի 10-ը, ժամը 10:00-ը**: Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Հայտերը կբացվեն Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, ք. Երևան, Արգիշտիի 1 հասցեով, **N 321 սենյակում, 2014թ. դեկտեմբերի 10-ին, ժամը 10:00-ին**:

Հայտը ներառում է գնային առաջարկը և մասնակցի գնման ընթացակարգին մասնակցելու մասին դիմումը:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/8» ծածկագրով ընթացակարգի փոփոխված հրավերով սահմանված կարգով (հրապարակված է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում «Շրջանակային համաձայնագրեր» բաժնի «Հրավերներում կատարված փոփոխություններ» ենթաբաժնում):

Ընթացակարգի ծածկագիրն է՝ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-15/25»:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և գնային առաջարկով ներկայացվելիք փաստաթղթերի օրինակելի ձևերը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ **Ռ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

Կատարող՝ Գ. Հուրոյան
հեռ. 514-194

Հավելված_**1**
«ԵՔ-ՇՀԱՊՁԲ-15/25» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ԴԻՄՈՒՄ

----------ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
Երևանի քաղաքապետարանի կողմից N «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-15/25» ծածկագրով հայտարարված ընթացակարգի ----------չափաբաժնին (չափաբաժիններին)
չափաբաժնի (չափաբաժինների) համարը
և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:
----------ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝
1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

----------ն հայտնում և հավաստում է, որ չունի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

--- ---
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

_____2014 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված-2
«ԵՔ-ՇՀԱՊՁԲ-15/25» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գ ն ի ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N **«ԵՔ-ՇՀԱՊՁԲ-15/25»** ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ...-ն առաջարկում է պայմանագիրը կատարել
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
համաձայն հետևյալ գների՝

Չափա-բաժինների համարները	Գնման առարկայի անվանումը	Գնային առաջարկի հաշվարկ		Առաջարկված գինը /տառերով և թվերով/
		Արժեք*	ԱԱՀ-ն**	
1	*2*	*3*	*4*	*5*
1	…			
…				
…..				
….				
….				

* 3-րդ սյունյակում նշված «Արժեքը ներառում է ինքնարժեքը և շահույթը:
** Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)
Կ. Տ.

_____2014 թ.
(ամսաթիվը, ամիսը)

Նախագիծ

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԵՔ- ՇՀԱՊՁԲ - 15/25

ք. Երևան << >> <<նոյեմբեր >> 2014 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ՝ Ռ. Թադևոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 2011թ. ապրիլի 7-ի N1211-Ա որոշման հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և <<_____>> -ն, ի դեմս տնօրեն _____յանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված **համակարգչային սարքավորումներ և օժանդակ նյութեր** /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում վճարել դրա համար:

1.2 Ապրանքը մատակարարվում է է սույն պայմանագրի N 1 և 2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր, գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

1.3 Մեկ տեսակի գերազանցմամբ Ապրանքի հանձնումը չի ծածկում այլ տեսակի Ապրանքի թերի հանձնումը:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեներով:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում սույն պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

3.1.8 Ձննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ _____ (_____) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.1.2 Պայմանագրով նախատեսված Ապրանքի դիմաց վճարումները կիրականացվեն այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, որի մասին կողմերի միջև կկնքվի *լրացուցիչ համաձայնագիր* (կողմերի միջև փոխադարձ համաձայնեցված կարգով վերոհիշյալ համաձայնագրով կարող է նախատեսվել մինչև 20 տոկոս կանխավճար):

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2015թ. դեկտեմբերի 25-ը:

5. Ապրանքի որակը

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետև՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված 3) և Ապրանքի ձեռքբերումը կամ ներմուծումը հավաստող փաստաթղթի բնօրինակը և պատճենը: Եթե Ապրանքի ձեռքբերման գործընթացում առկա են մի քանի միջնորդ կազմակերպություններ, ապա

նախորդ միջնորդ կազմակերպությունների կողմից դրա ձեռքբերման կամ ներմուծման վերաբերյալ փաստաթուղթ չի ներկայացվում:

6.2 Արձանագրություն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ինչպես նաև ներկայացվում է սույն պայմանագրի 6.1 կետով նախատեսված փաստաթղթերը: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) Հարցի կանոնավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Այն դեպքում, երբ «Գնումների մասինե ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի

լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված Ապրանքի ընդհանուր քանակի բաժանումը ըստ եռամսյակների կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ համաձայնագրով:

Սույն պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

****** Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է պատվիրատուի համաձայնությամբ.

2) Վաճառողն է պատասխանատվություն կրում գործակալի պարտավորությունների համար:

9,5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը.

2) պայմանագրով նախատեսված ապրանքի, աշխատանքի կամ ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը սահմանվում է պայմանագրով՝ նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ:

9.8 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.9 Պայմանագիրը և հավելվածները կազմված են ____ էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.10 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.11. Սույն պայմանագրով նախատոսված Գնորդի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է **Երևանի Մալաթիա-Սեբաստիա, Նոր**

Նորք, Կենտրոն, Նորք Մարաշ, Նուբարաշեն և Շենգավիթ վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
---	---
ստորագրություն¤	ստորագրություն¤
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1

‘ ’ « ե 2014 թ. կնքված
N ԵՔ-ՇՀԱՊՁԲ - 15/25 գնման պայմանագրի

Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ի Ր*

Հ/Հ	Անվանումը	Չափի միավորը	Տեխնիկական բնութագիրը
	1.Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան		
1	Հոսանքակարգավորիչ	հատ	UPS 1000-1200, E-PRO-600, կամ համարժեքը
2	Հոսանքակարգավորչի մարտկոց	հատ	մարտկոց՝ նախատեսված հոսանքակարգավորիչների համար, 12V, 14A, MERCURI ֆիրմայի կամ համարժեքը
3	Համակարգիչ	հատ	Ինտելպենտիում core i3 1155s, (FSB 100MHz, PCI-e 2.0 (16x), 1PCI-e (1x), Gbt. LAN, 4xSATA2, SB5.1, 2xDDR3 1333MHz, onboard VGA, PCI, COM, LPT), օպ. Հիշողությունը 4 գբ/ozu/, առանձին տեսաքարտ 1 գբ, հարթ սկավառակ՝ 500գբ, մոնիտոր 19” դույմ, DVD-RW, լազերային մկնիկ /Genius ֆիրմայի, կամ համարժեքը/, ստեղնաշար, կամ համարժեքը
4	Համակարգչի տպիչ	հատ	Լազերային՝ մոնոքրոմ, լուծաչափը՝ 1800x600 DPI տպման արագությունը՝ 20-23 էջ/րոպե, թղթի ձևաչափը՝ A4, A5, B5, Letter, Legal, հիշողությունը՝ 64MB։ Բազմաֆունկցիոնալ
5	Պատկերատպիչ	հատ	Մեխանիկական, հիշողությունը մինչև 32 Գբ, լուծաչափը՝ 300/600 dpi,եզրաչափքերը՝ 258x32,9x30,7 մմ,
	2.Նոր Նորք վարչական շրջան		
6	*Համակարգիչ*		*I3/hdd 500 gb/ ram 2gb /video 1 gb/ DVD-RW/ ստեղնաշար /մկնիկ /մոնիտոր 20"/ անխափան սնուցման սարք*
7	*Տպիչ սարք, A4, բազմաֆունկցիոնալ, / տպիչ, պատճեն, սկան/*	հատ	*Լազերային՝ մոնոքրոմ, լուծաչափը՝ 1800x600 DPI տպման արագությունը՝ 31 էջ/րոպե, թղթի ձևաչափը՝ A4, Letter, Legal, հիշողությունը՝ 64MB*
8	*Տպիչ սարք, A4, բազմաֆունկցիոնալ, / տպիչ, պատճեն, սկան/*	հատ	*Տպիչ սարք, բազմաֆունկցիոնալ, լազերային, տպման արագությունը՝ 23 էջ/րոպե, թղթի ձևաչափը՝ A4/։*
9	*Տպիչ սարք, A4, բազմաֆունկցիոնալ, / տպիչ, պատճեն, սկան/*	հատ	*Տպիչ սարք, բազմաֆունկցիոնալ, ,լազերային, տպման արագությունը՝ 28 էջ/րոպե, թղթի ձևաչափը՝ A4։*
10	*Տպիչ սարք, A4, բազմաֆունկցիոնալ, / տպիչ, պատճեն, սկան/*	հատ	*Տպիչ սարք, բազմաֆունկցիոնալ, լազերային, տպման արագությունը՝ 35 էջ/րոպե, թղթի ձևաչափը՝ A4։*
	3. Կենտրոն վարչական շրջան		

11	*Սկավառակ CD-R*	հատ	êÏ³í³é³Ï êÇ ¸Ç-è(CD-R 700 MB) 700մբ հիշողությամբ ծավալով , 52X ձայնագրման արագությամբ, պլաստիկ ïáõ÷áí
12	Սկավառակ DVD-R	հատ	êÏ³í³é³Ï ¸Ç ìÇ-¸Æ-è (DVD-R 4.7 Gb,) 4.7 գբ հիշողությամբ ծավալով , 16X ձայնագրման արագությամբ, åÉ³ëïÇÏ ïáõ÷áí
13	Հիշող սարք/Flash Card 16 GB/	հատ	USB ինտերֆեյսը՝ USB 2 կամ 3
14	Հիշող սարք/Flash Card 8 GB/	հատ	USB ինտերֆեյսը՝ USB 2 կամ 3
15	Հիշող սարք/Flash Card 4 GB/	հատ	USB ինտերֆեյսը՝ USB 2 կամ 3
16	Հիշող սարք/Flash Card 32 GB/	հատ	USB ինտերֆեյսը՝ USB 2 կամ 3
17	Մկնիկ	հատ	Բազմաֆունկցիոնալ մկնիկ USB 2000դպի տեսակի ինտերֆեյսով և անիվով, լազերային, 3 ստեղնով
18	Ստեղնաշար	հատ	Ինտերֆեյս PS/2 , ստանդարտ 104 կոճակով
19	Քարթրիջ 1	հատ	նախատեսված HP laserjet m1132 տպիչների համար կամ համարժեքը
20	Քարթրիջ 2	հատ	ունիվերսալ FX9/FX10/104 տպիչների համար
21	Քարթրիջ 3	հատ	նախատեսված CANON MF 4410 տպիչների համար կամ համարժեքը
22	Քարթրիջ 4	հատ	նախատեսված HP 7610 տպիչի համար, սեվ, դեղին, կապույտ, կարմիր տոներների կոմպլեկտ
23	Անխափան սնուցման սարք		Powercom WAR-1000AP, 1000VA UPS Ï³Ù Ñ³Ù³ñÅ»ùÁ
	4. Նորք Մարաշ վարչական շրջան		
24	Համակարգիչ	Լրակազմ	--Պրոցեսոր՝ Core 2 Duo E8200 6M 1333 MHZ, կամ համարժեքը, --Մայրական սալիկ՝ Intel P5 G41, կամ համարժեքը, --Կոշտ սկավառակակիր՝ HDD MAXTOR-SEAGATE 500 GB 7200 SATA, կամ համարժեքը --Հիշողության սալիկ՝ DDR3 1333MHz 2GB , կամ համարժեքը --DVD սարքավար ձայնագրիչ՝ Samsung 22X, կամ համարժեքը ---Համակարգչային պահարան սնուցման բլոկով՝ 650 Վտ սնուցման բլոկով(With PS 550W), կամ համարժեքը --Պրոցեսորի հովացուցիչ՝ Cooler for CPU Intel Quad Core, կամ համարժեքը ---Ստեղնաշար՝ Genius KB111(slim), կամ համարժեքը ---Մկնիկ օպտիկական՝ Genius PS/2, կամ համարժեքը ---Բարձրախոս՝ Genius SP-s110, կամ համրժեքը --LCD մոնիտոր, ոչ պակաս քան 17'', LG

			W2243S կամ համարժեքը ---Տեսաքարտ՝ Ատի Ռադեոն 1Գբ ՊիՍիԱյ-Էքսպ(ATI Radeon Gb PCI Exp) կամ համարժեքը ---Երաշխիքային սպասարկման ժամկետը առնվազն 1/մեկ/ տարի
25	Լազերային տպիչ /Բազմաֆունկցիոնալ/	հատ	Լազերային՝ մոնոքրոմ, լուծաչափը՝ 1800x600 DPI տպման արագությունը՝ 31 էջ/րոպե, թղթի ձևաչափը՝ A4, A5, B5, Letter, Legal, հիշողությունը՝ 64ՄԲ, XEROX 3200 MFP կամ համարժեքը: Փաթեթավորումը՝ գործարանային տուփով: Ապրանքի տեղափոխումը և գործարկումը պետք է իրականացվի մատակարարի միջոցներով: Երաշխիքային սպասարկման ժամկետը առնվազն 1/մեկ/ տարի
	5.Նուբարաշեն վարչական շրջան		
26	Համակարգիչ-1	Հատ	Համակարգիչ P400 E85+ G2020/2Gb/500GB/KB/No OS/ DVD/ KBD / Mouse /
27	Մոնիտոր	Հատ	Մոնիտոր 18.5" LED 196V3LAB5/00
28	Նոթբուկ /դյուրակիր համակարգիչ/	Հատ	Պրոցեսոր Intel Core i5-3230M (2.6 GHz, 3MB), էկրան 15.6" LED HD (1366 x 768), Anti-Reflective, Օպերատիվ հիշողություն 4 GB DDR3, 1600 MHz, Կոշտ սկավառակ 500GB, SATA II, 5400 rpm, Վիդեո քարտ AMD Radeon HD 8750M, 1 GB, Տեսախցիկ 720p HD, Ցանցային սարքեր, Fast Ethernet LAN, 802.11 bgn, Wi-Fi, Bluetooth 4.0 Օպտիկական սկավառակակիր Super Multi Dual Layer, Մարտկոց 6 Cell (48Wh) Օպերացիոն համակարգ Ubuntu Այլ3 x USB 2.0, VGA, HDMI, Card Reader, RJ45 (LAN) ծագման վկայականով
29	Պատճենահանման սարք	հատ	Բազմաֆունկցիոնալ, գունավոր, A4, Monochrome laser printer (Print, Copy, Scan, 35-sheet ADF), 23 ppm, Monochrome laser printer (Print, Copy, Scan, 35-sheet ADF), 600 x 600 dpi, 23 ppm, Max. 8,000 pages, 64 MB, USB 2.0 Hi-Speed, Cartridge 728 (2,100 pages) Ships with 1,000 pages starter cartridge
	6.Շենգավիթ վարչական շրջան		
30	Համակարգչային հավաքածու	հատ	Պրոցեսոր (CPU) — intel G2020 Մայրական պլատա (Montherboard) — MB Gigabyte GA-H61M-S1 Օպ. հիշողություն (DDR) — 4Gb DDR3 PC1333 Կոշտ սկավառակ (HDD) — 500 Gb Sata3 Օպտիկա (Optic) — DVD-RW Samsung, կամ համարժեք Արկղ (Case) — Invader with PSU Power Train 500W Ստեղմնաշար (Keyboard) — Genius KB120, կամ համարժեք Մկնիկ (Mouse) — Genius N120, կամ համարժեք Ձայնարկիչ (Speaker) — Genius S10, կամ համարժեք

			Մոնիտոր (Monitor) | LG E1933 LED, կամ համարժեք
31	Սկաներ (համակարգչի համար, թերթային)	հատ	Թերթային սկաներ՝ A4 (210x297) մմ ձևաչափի թղթով աշխատող, 35 մմ սահող ադապտերով, USB 2 ինտերֆեյսով, 4800 x9600 dpi լուծաչափով (օպտիկական թույլտվությամբ),չափի սկան անելու մաքսիմալ հնարավորությամբ կամ համարժեքը:
32	Տպիչ սարք, A4, բազմաֆունկցիոնալ, / տպիչ, պատճեն, սկան/	հատ	Լազերային, տպման արագությունը՝ 23 էջ/րոպե, թղթի ձևաչափը՝ A4:
33	Տպիչ լազերային	հատ	Լազերային մոնոխրոմային , monochrome տպում է մինչև (prints at up-to) 2400 x 600dpi. Սև և սպիտակ լազերային տպիչ (Black & white laser printer Media): A4, տպման արագությունը (Print speed (A4)) մինչև 18ppm. Canon LASER SHOT LBP6020 կամ համարժեքը:

Պարտադիր պայման՝

---- ապրանքը պետք է լինի չօգտագործված:

Գ Ն Ո Ր Դ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի 1

(ստորագրություն)
Կ.Տ

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
‘_____’ « » 2014 թ. կնքված
N ԵՔ-ՇՀԱՊՁԲ - 15/25 գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

/ՀՀ դրամ/

Հ/Հ	Ձեռք բերվող ապրանքի անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	Նախատեսվում է գնել 2015թ. ընթացքում մինչև դեկտեմբերի 25-ը ներառյա		*Ընդամենը*	
				Քանակը	**Գինը**	**Քանակը**	**Գինը**
	1. Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան						
1	Հոսանքակարգավորիչ	**հատ**		18		18	
2	Հոսանքակարգավորչի մարտկոց	**հատ**		28		28	
3	Համակարգիչ	**հատ**		8		8	
4	Համակարգչի տպիչ	**հատ**		3		3	
5	Պատկերատպիչ	**հատ**		3		3	

	2. Նոր Նորք վարչական շրջան						
6	*Համակարգիչ*	**հատ**		10		10	
7	*Տպիչ սարք, A4, բազմաֆունկցիոնալ, / տպիչ, պատճեն, սկան/*	**հատ**		4		4	
8	*Տպիչ սարք, A4, բազմաֆունկցիոնալ, / տպիչ, պատճեն, սկան/*	**հատ**		2		2	
9	*Տպիչ սարք, A4, բազմաֆունկցիոնալ, / տպիչ, պատճեն, սկան/*	**հատ**		1		1	
10	*Տպիչ սարք, A4, բազմաֆունկցիոնալ, / տպիչ, պատճեն, սկան/*	**հատ**		1		1	
	3. Կենտրոն վարչական շրջան						
11	*Սկավառակ CD-R*	**հատ**		200		200	
12	Սկավառակ DVD-R	**հատ**		50		50	
13	Հիշող սարք/Flash Card 16 GB/	**հատ**		5		5	
14	Հիշող սարք/Flash Card 8 GB/	**հատ**		20		20	
15	Հիշող սարք/Flash Card 4 GB/	**հատ**		30		30	

16	Հիշող սարք/Flash Card 32 GB/	**հատ**		4		4	
17	Մկնիկ	**հատ**		40		40	
18	Ստեղնաշար	**հատ**		40		40	
19	Քարթրիջ 1	**հատ**		25		25	
20	Քարթրիջ 2	**հատ**		50		50	
21	Քարթրիջ 3	**հատ**		30		30	
22	Քարթրիջ 4	**հատ**		10		10	
23	Անխափան սնուցման սարք	**հատ**		5		5	
	4.Նորք Մարաշ վարչական շրջան						
24	Համակարգիչ	**հատ**		1		**1**	
25	Լազերային տպիչ /Բազմաֆունկցիոնալ/	**հատ**		1		**1**	
	5.Նուբարաշեն վարչական շրջան						
26	Համակարգիչ-1	**հատ**		4		**4**	

27	Մոնիտոր	**հատ**		4		**4**	
28	Նոթբուկ /դյուրակիր համակարգիչ/	**հատ**		1		**1**	
29	Պատճենահանման սարք	**հատ**		1		**1**	
	6.Շենգավիթ վարչական շրջան						
30	Համակարգչային հավաքածու	**հատ**		11		**11**	
31	Սկաներ (համակարգչի համար, թերթային)	**հատ**		2		**2**	
32	Տպիչ սարք, A4, բազմաֆունկցիոնալ, / տպիչ, պատճեն, սկան/	**հատ**		4		**4**	
33	Տպիչ լազերային	**հատ**		9		**9**	
	ԸՆԴԱՄԵՆԸ						

Գ Ն Ո Ր Դ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի 1

(ստորագրություն)
Կ.Տ

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 4
‘__________’ « ե 2014 թ. կնքված
N ԵՔ-ՇՀԱՊՁԲ - 15/25 գնման պայմանագրի

¶Ýáñ¹

Ñ³ëó»__________________________
ÑÑ________________________________

ÑíÑÑ____________________________

Ì³×³éáÕ

Ñ³ëó»__________________________
ÑÑ________________________________

ÑíÑÑ____________________________

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N ___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

‘__’ ‘_________’ 20 թ.

Պայմանագրի անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ ‘__ ’ ‘_____________’ 20 թ.
Պայմանագրի համարը՝ _

Գ Ն Ո Ր Դ	**Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ**
Երևանի քաղաքապետարան ք. Երևան, Արգիշտիի 1	------------------- ---------------------- -------------------------
-------------------------------- (ստորագրություն) Կ.Տ	-------------------------------- (ստորագրություն) Կ.Տ

Գնորդն, ի դեմս____ և Վաճառողն՝ ի դեմս____, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ ‘___’ ‘_________’ 20 թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի ¥պատասխանատու ստորաբաժանման¤ N__ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները ¥այսուհետև՝ Մատակարարում¤ համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Վաճառողը ‘__’ ‘_________’ 20 թ–ից ‘__’ ‘_________’ 20 թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Մատակարարումները

Մատակարարման համառոտ նկարագիրը	Մատակարարման քանակական ցուցանիշները	Մատակարա-րումների ժամկետը	Վճարման ենթակա գումարը ¥հազար դրամ¤	Վճարման ժամկետը ¥ըստ ժամանակացույցի¤

Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ Մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

² åñ ³ ÝùÁ Ñ ³ ÝÓÝ»ó

¥ë ï áñ ³ ·ñáõAÙáõÝ¤

³ ½ · ³ ÝáõÝ

Î î

² åñ ³ ÝùÝ ÁÝ¹áõÝ»ó

¥ë ï áñ ³ ·ñáõAÙáõÝ¤

³ ½ · ³ ÝáõÝ

Î î